ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

« 03 » դեկտեմբերի 2012 թ.
թիվ 145

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 8 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Սարկոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 10631-12
«03» 12 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«08» նոյեմբերի 2012 թվականի

Որոշում N 83

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Գայ համայնք ավագանու 2012 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 6 որոշումը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի մարտի 26-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման նոր հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 1 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 3-ին
գ. Գայ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գայի գյուղական
համայնքի ղեկավարի 2012 թվականի
նոյեմբերի 8-ի N 83 որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գայի գյուղական
համայնքի ղեկավարի 2009 թվականի
մարտի 26-ի N 1 որոշման

Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման
հանձնաժողովների կազմ

Հանձնաժողովի նախագահ՝

Սեյրան Մարկոսյան - Գայ համայնքի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝

Գոռ Հովհաննիսյան - Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ

Հովհաննես Հարությունյան - Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսական բաժնի պետ

Լիաննա Հարությունյան - Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

Հրանուշ Դանիելյան - Ավագանու անդամ

Արթուր Միրզոյան - Ավագանու անդամ

Ֆայզո Ավդոյան - Ավագանու անդամ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«01 » նոյեմբերի 2012 թվականի

Որոշում N 82

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի բնակիչ Հմայակ Սահակյանի 2012 թվականի նոյեմբերի 29-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի բնակիչ Հմայակ Սահակյանին տալ թույլտվություն Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Արարատյան փողոց, թիվ 50, ԿՕ 04-033-063-002 հասցեում գտնվող սեփական տնամերձ հողամասի վրա իրականացնելու բնակելի տան կառուցման աշխատանքներ:
2. Շինարարական աշխատանքները իրականացնել երեք տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավարի ժ/պ՝ Ս. Քոչարյան

2012 թվական
դեկտեմբերի 3-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«01» նոյեմբերի 2012 թվականի

Որոշում N 81

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐԴՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով և հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակչուհի Վարդուշ Հարությունի Հարությունյանի 2012 թվականի (ծնված 00.00.1927թ.) հոկտեմբերի 30-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արամավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Արարատյան 22 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Վարդուշ Հարությունի Հարությունյանի (ծնված 00.00.1927թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.13 հա հողամասի և կից 30քմ ինքնակամ հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և կից շենք - շինությունների նկատմամբ /բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են 1960թ./:
2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Վարդուշ Հարությունի Հարությունյանի (ծնված 00.00.1927թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տան և շենք -շինությունների նկատմամբ, տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավարի ժ/պ Խ. Քոչարյան

2012 թվական
դեկտեմբերի 3-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «06» նոյեմբերի 2012թ.-ի

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 14

ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով և 169-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Սեյրան Մարկոսյանի 2012 թվականի նոյեմբերի 5-ի համաձայնությունը.

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավար Սեյրան Մարկոսյանին 2012 թվականի նոյեմբերի 7-ից հետ կանչել արձակուրդից՝ արձակուրդի չօգտագործված օրերը հետագայում օգտագործելու նպատակով:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայ համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 3-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 09» նոյեմբերի 2012թ.-ի

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 15

ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գայ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանի 2012 թվականի նոյեմբերի 08 -ի դիմումը.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Գայի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին տրամադրել 2012թվականի ամենամյա արձակուրդը՝ նոյեմբերի 12-ից մինչև դեկտեմբերի 13-ը ներառյալ, 24 աշխատանքային օր տևողությամբ (20 աշխատանքային օր՝ նվազագույն և 4 լրացուցիչ օր):
2. Աննա Թադևոսյանին աշխատանքի մեջ համարել 2012 թվականի դեկտեմբերի 14-ից:
3. Աշխատանքային պարտականությունները ժամանակավորապես դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Ժենիկ Բոյաջյանի վրա:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայ համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 3-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 16» նոյեմբերի 2012թ.-ի

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 16

ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով, 169-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Աննա Թադևոսյանի 2012 թվականի նոյեմբերի 15-ի համաձայնությունը.

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին 2012 թվականի նոյեմբերի 19-ից հետ կանչել արձակուրդից՝ արձակուրդի չօգտագործված օրերը հետագայում օգտագործելու նպատակով:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայ համայնքի ղեկավար՝ Ա. Մարկոսյան

2012 թվական
դեկտեմբերի 3-ին
գ. Գայ